Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2025թ. N Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման մեջ կատարել լրացում՝ որոշման հավելվածը լրացնել նոր 51.1 և 51.2 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ

«51.1 Հանձնաժողովի կողմից Երևանի քաղաքի ավագանու որոշման նախագծին բացասական եզրակացություն տալու դեպքում, նախագիծը չի ներառվում Երևան քաղաքի ավագանու նիստի օրակարգի չզեկուցվող հարցերի մեջ:

51.2 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին նախագծին Հանձնաժողովի կողմից բացասական եզրակացություն տալու դեպքում, նախագիծը պետք է առանձին զեկուցվի և քվեարկվի Երևան քաղաքի ավագանու նիստում:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության անդամ
Գրիգոր Իսկանդարյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Երևանի ավագանու կանոնակարգում կատարել լրացում՝ սահմանելով կարգավորում, ինչպես Հանձնաժողովի կողմից բացասական եզրակացություն ստացած նախագծերի հրապարակայնության և քննարկման մասով, այնպես էլ նախատեսվող գործունեությանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տալուն հաջորդող աշխատանքային գործընթացների հանրօգուտ կազմակերպման համար:

Երևանի ավագանու հանձնաժողովների գործունեությանը նպատակը ավագանու որոշումների նախագծերի վերաբերյալ առավել խորը և մասնագիտական վերլուծության արդյունքում համապատասխան եզրակացություն ներկայացնելն է, որը ավագանու անդամների համար հիմք է ավագանու որոշումների տարբեր նախագծերի վերաբերյալ նախնական մոտեցման կամ դիրքորոշման ձևավորման համար:

Սակայն լինում են իրավիճակներ, երբ բացասական եզրակացություն ստացած նախագծերը ընդգրկված են լինում ավագանու նիստի օրակարգի չզեկուցվող նախագծերի մեջ և ավագանու անդամները, ովքեր հանձնաժողովում դեմ են եղել նախագծին, սակայն չզեկուցվող հարցերում ընդգրկված այլ նախագծերի կողմ լինելու պարագայում, ստիպված կողմ են քվեարկում իրենց կողմից բացասական եզրակացություն ստացած նախագծերին՝ չզեկուղվող հարցերի՝ մեկ քվեարկությամբ ընդունելու կամ մերժելու պատճառով, այդպիսով որոշակի հակասություն ստեղծելով Հանձնաժողովում և ավագանիում ավագանու անդամի գործունեության վերաբերյալ:

Սա արդեն Հանձնաժողովի գոյությունը կամ Հանձնաժողովի գործունեությունը դարձնում է անիմաստ, քանի որ Հանձնաժողովի եզրակացությունը դառնում է կամայական կիրառման կամ անտեսման առարկա, այնինչ՝ հանձնաժողովի եզրակացությունը միշտ պետք է հիմք լինի համապատասխան մոտեցման: Այպիսով՝ առաջարկվում է բոլոր այն նախագծերը, որոնք Հանձնաժողովների կողմից բացասական եզրակացություն են ստացել, առնվազն չնդգրկվեն Երևան քաղաքի ավագանու նիստի օրակարգի չզեկուցվող հարցերի շրջանակում:

Այսպես՝ Շրջակա միջավայրին վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի 16-րդ հոդվածով սահմանված է տեղական ինքնակառավարման մարմնի (մարմինների) կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման կարգը: Հոդվածի 1-3-րդ և 6-րդ մասերով սահմանվում է հետևյալը. « 1. Նախաձեռնողը, որը մտադիր է իրականացնել սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված նախատեսվող գործունեություն համայնքում,

որի վարչական սահմաններում իրականացվելու է նախատեսվող գործունեությունը, համայնքի ղեկավարին է ներկայացնում ծանուցում, որը ներառում է՝

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան, նպատակը, համառոտ նկարագիրը.

3) նախատեսվող գործունեության իրականացման վայրը:

2. Համայնքի ղեկավարը ծանուցումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, կատարում է շահագրգիռ հանրության ծանուցում և ծանուցումից հետո՝ ոչ շուտ, քան 21-րդ և ոչ ուշ, քան 25-րդ աշխատանքային օրն իրականացնում է հանրային լսում ազդակիր բնակավայրում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հանրային լսումից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, համայնքի ավագանին որոշում է ընդունում նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու վերաբերյալ, որը պետք է պարունակի հիմնավորումներ դրա պատճառների մասին: (...)

6. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում համայնքի ավագանու կողմից որոշում չկայացվելու դեպքում նախաձեռնողը փաստաթղթերի փաթեթը կարող է փորձաքննության ներկայացնել առանց համայնքի ավագանու նախնական համաձայնության:»:

Նմանօրինակ նախագծերը ներկայացվում են Երևանի քաղաքապետի կամ տեղական իշխանության ներկայացուցիչների կողմից, ուստի, համաձայն Երևանի ավագանուն կանոնակարգի, հեղինակի պահանջով նախագիծը հանվում է նիստի օրակարգից: Սրանով պայմանավորված նախատեսվող գործունեությանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տալու վերաբերյալ նախագծերը որոշ դեպքերում հանվել են Երևան քաղաքի ավագանու նիստի օրակարգից, ինչով հնարավորություն է ստեղծվել կառուցապատողի համար փորձաքննության փաստաթղթերի փաթեթը ներկայացնել փորձաքննության՝ առանց համայնքի ավագանու նախնական համաձայնության, որը չի բխում հանրային շահից, քանի որ ստեղծվում է իրավիճակ, երբ Երևանի ներկայացուցչական մարմնի անդամները դեմ են արտահայտվել նախագծին, որի դեպքում ենթադրվում է, որ կառավարող քաղաքական ուժերը ևս դեմ են արտահայտվել՝ հաշվի առնելով մանդատների քանակը գործող ավագանիում և համապատասխան հանձնաժողովում, սակայն կառուցապատողը կարողանում է շարունակել իր աշխատանքները՝ ուղղված գործունեության թույլատարմանը: Ըստ էության, Երևանի ավագանու համապատասխան ուղղվածության հանձնաժողովը բացասական եզրակացություն է տալիս նախատեսվող գործունեության իրականացմանը, սակայն դա որևէ նշանակություն չի ունենում:

Համապատասխան հանձնաժողովի բացասական եզրակացությունը հուշում է, որ նախատեսվող գործունեության հետ կապված առկա են խնդիրներ ու նախագիծը

Երևանի ավագանու օրակարգից հանելը նշանակում է հնարավորություն ընձեռել՝ սկսելու խնդրահարույց գործունեություն, որը սակայն Երևանի ավագանու ամբողջ կազմի համար արդեն մնում է անհայտ կամ ամբողջական չբացահայտված:

Սույն նախագծով առաջարկվում է բոլոր այն դեպքերում, երբ Հանձնաժողովի կողմից նախատեսվող գործունեությանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տալու վերաբերյալ բացասական եզրակացություն է տրամադրվում, այդ նախագծերը պետք է լինել պարտադիր զեկուցվող և պետք է քվեարկվեն Երևան քաղաքի ավագանու կողմից, ինչով կկանխվի կառուցապատողին՝ նախատեսվող խնդրահարույց գործունեության իրականացման մասով աշխատանքների շարունակման հնարավորության տրամադրումը և թույլտվության ստացումը օրենքով սահմանված ժամկետներում նախագծի մասին որոշում չկայացնելու հիմքով:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության անդամ
Գրիգոր Իսկանդարյան

_____